քի՛ կամ շատ , կանուխ կամ ուշ ներգործութիւն պիտի ընէ . այս տարբերութիւնն ալ կը պատահի նիւթին զանազանութենէն. այսինքն տկար կամ զօրաւոր ըլլալէն. հարուածն սկսած ժամանակէն , այսինքն կանուխ կամ ուշ սկսելէն , յաճախելէն , տեւողութենէն և այլն : Ահա դուք ալ ճիշդ այսպէս էք . ձեր կիրքերն ու մոլութիւններն եթէ ձեզմէ ամենց վերայ շուտով երեւելի ներգործութիւն չըներ , պատճառն այն է , որ նախ նոցա կազմը բնութեամբ ամուր և կատարեալ ատաղձ կը լինի . երկրորդ՝ իրենց կիրքերը բարեբաղդութեամբ և բարերար պատճառով մի ուշ արթնցած և գործադրուած կը լինին և յաճախած չեն լինիր . երրորդ՝ չեն յարատեւեր . այլ շուտով կը զզան և ետ կը կենան : Այս առիթները , այո՛ կարող են վնասներին անտեսանելի ընել , բայց վնասն բոլոր արգիլել չեն կարող . ուստի բնաւ պէտք չէ վհատիլ :

(Շ.որ—նեակ—ա—լե—ան :)

## ԽՕՍՔ ՉԸՀԱՍԿԱՑՈՂՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԳՈՐԾ ՉՈՒՆԻՄՔ

Արշալոյս իւր 975 թուով գործով Սիօնի դէմ յարձակած էր իւրեն բնական ըլլալու եւ թշնամական ոգւով : Նոյնպէս Հայրենիք 176 թուոյն մէջ ապերախտութենէ յածուած Կարապետ Տ . Մինասեանը նամակ մի հրատարակած էր իբր ի պատասխանի Սիօնի հերքման . Սիօն՝ թէ Արշալոյսի և թէ Հայրենիքի հրատարակութեանց մէջ հակառակութեան ցած ոգի մը նշմարելով՝ չուզեր պատասխանել եւ իւր էջերը անօգուտ բանակռւութեամբ լեցնել : Սիօն բաւական կը համարի յայտնել , որ չունի իրենց հակառակասիրութեան կիրքը և չը մոռցըներ յինքն ատելութն և խռովասիրութն ոգի , որ ամեն ողջամտոյ զզուանք կ'առթէ և ոչ այլ ինչ . այլ Սիօնի նշանաբանն է ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ և ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ : Բայց որովհետեւ Արշալոյս մասնաւոր նպատակաւ կը ջանայ Երուսաղէմայ Միաբանութիւնը Էջմիածնայ Մայր Աթոռոյն եւ նորա Գահակալ ամենայն Հայոց Վ. Ե. Հ. Կաթողիկոսին հետ թշնամացնել . այս մասին հարկ կը համարինք հետեւեալ պաշտօնական ազդը հրատարակել :

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴՔ

### Ա.

Սուրբ Ս . Էջմիածնի Մայր Աթոռոյն իրաւունքն ու պատիւը ամեն կերպիւ պաշտպանել է ցարդ և կը պաշտպանէ միշտ . քանզի Միաբանութիւնը լաւ գիտէ , որ Մայր Աթոռոյ իրաւունքը , Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւունքն է և Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւունքը Ազգի կեանքն է . հետեւաբար ինչպէս որ արժան է կեանքը պահպանել , նոյնպէս կը պահպանէ Մայր Աթոռոյ իրաւունքը . այսպէս ալ նորա Վեհափառ Գահակալին հետ երբէք թշնամութիւն չունի . և եթէ ինչ ինչ գործոց մասին անհամաձայնութիւն լինի , այն եւս թշնամութիւն չէ :

Ուստի Արշալոյսը այս մասին բոլորովին կը սխալի , երբ երկու Աթոռոյ մէջ թշնամութիւն կ'երազէ . մանս ուրոյ կը յորդորենք զինքը , որ այս տեսակ հրապարակական թշնամութեամբ երկու Աթոռոյ մէջ որոմ ցանելու չը ջանայ , և ասով խռովութեան սրբազան սահմանը չարատաւորէ :

digitised by A.R.A.R.@